МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No. 04/22.1/4008-2024
«03» 09 2024թ.

«ՍԱԲԱ-ՆԻՐՈՒ» (SABA NIROO) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԱԼԻ ՂՈՐԲԱՆԻԻՆ
ՀԱՍՑԵ՝ ԹԵՀՐԱՆ, ՍԱՎԵ ՄԱՅՐՈՒՂՈՒ 9 ԿՄ,
ՇՈՀԱԴԱՅԵ ՍԱԴԻԴ ՓՈՂՈՑ
ՀՎՀՀ՝ 411376567635
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ SABANIROOMANAGING@GMAIL.COM

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Ղորբանի,

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՍԱԲԱ-ՆԻՐՈՒ» (SABA NIROO) ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև 2021 թվականի հունիսի 15-ին կնքվել է «Լոռի-1» հողմակայանի Vestas-47 մակնիշի թվով 4 հատ 660 կՎտ հողմաագրեգատների թերությունների վերացման, արտադրող գործարանի հրահանգների ծավալների համաձայն մեկանգամյա տարեկան տեխսպասարկման (էլեկտրոնային, էլեկտրական և մեխանիկական մասեր) և շահագործման հանձնման աշխատանքների ձեռքբերման վերաբերյալ «ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-21/33» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի 7.2 կետի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի սեպտեմբերի 9-ը:

2023 թվականի փետրվարի 2-ին կնքված համաձայնագիր N 5-ի 3.1.2 կետի համաձայն՝ պայմանագրի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2023 թվականի փետրվարի 20-ը:

Պայմանագրի 6. 2 կետի համաձայն՝ Օբյեկտի կառուցման ծավալը ներառում է նաև Կապալառուի կողմից բոլոր այն աշխատանքների կատարումը, ծառայությունների

կատարումը, նյութերի տրամադրումը, որոնք Պայմանագրում նշված չեն որպես Պատվիրատուի պարտականություններ և ներառված չեն Պայմանագրի Համաձայնագրի՝ «Գնման հայտ», «Նախագծային և այլ փաստաթղթեր» վերտառությամբ Հավելվածներում, սակայն ողջամտորեն կարող են բխել Պայմանագրից՝ որպես Օբյեկտի կառուցման համար Կապալառուից պահանջվող աշխատանքներ, ծառայություններ, նյութեր, եթե այդպիսի աշխատանքները, ծառայությունները, նյութերը նախատեսված լինեին Պայմանագրում:

Պայմանագրի հավելված 2-ի համաձայն՝ աշխատանքի ամբողջական կատարումն (այսուհետ՝ նաև Աշխատանքների ամբողջական կատարում) իր մեջ ներառում է բոլոր չորս հողմաագրեգատների շահագործման հանձնումը՝ ներառյալ շահագործման հանձնման համար անհրաժեշտ բոլոր մատակարարումների, վերանորոգման և թերությունների վերացման աշխատանքների, ինչպես նաև արտադրող գործարանի հրահանգների ծավալների համաձայն մեկանգամյա տարեկան տեխսպասարկման (էլեկտրոնային, էլեկտրական և մեխանիկական մասեր) աշխատանքների ամբողջական իրականացումը:

Տվյալ պարագայում 2024 թվականի օգոստոսի 28-ի դրությամբ չորս հողմաագրեգատներից երկուսը շահագործման չեն հանձնվել՝ դրանցում առկա անսարքությունների պատճառով, և չեն իրականացվել արտադրող գործարանի հրահանգների ծավալների համաձայն տեխնիկական սպասարկման աշխատանքները, հետևաբար Կապալառուի կողմից խախտվել են Պայմանագրի 6.2 կետով և հավելված 2-ով սահմանված պարտավորությունները ու Պայմանագրի 7.2 կետով սահմանված ժամկետը:

Պայմանագրի 9.10 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կապալառուն խախտել է 7.2 կետով նախատեսված Օբյեկտի ավարտման համար նախատեսված ժամկետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, սույնով ծանուցվում եք, որ Պատվիրատուն՝ Պայմանագրի 9.10 կետի հիմքով, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Կապալառուից կգանձվեն նաև որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 12 778 116,32 (տասներկու միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար հարյուր տասնվեց դրամ և 32 լումա) ՀՀ դրամի և 7 500 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ**

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի պետ
Արտակ Խաչատրյան, հեռ. 060380040